*Եւ արդ՝ Հայր սուրբ և վարդապետ բարի՝ որ փառաւորեցար անճառ փառաւք, մտեր ի յառագաստն, և խրախացար ի հարսանիսն, յիշեա զարեամբ պսակեալսն յանաւրինաց՝ թերևս արժանասցին այդր կենաց և համայնիւ ի կատարել գյիշատակս քո յաւէտ մերս ժողովոյ, հայցեա ի սիրողէն քո զքաւութիւն և զթողութիւն մեղաց, զի արժանի լիցուք ընդ քեզ և ընդ ամենայն սուրբս փառաւորել զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ այժմ և միշտ և յաւ.։*

Երջանկացդ պարուց՝ յերկիր անկեալ եղկելի ոգիս Յոհ. եպ. արքաեղբայր Հայոց՝ հայցեմ յիշել զիս եւ զիմսն ի Քրիստոս, զի յոյժ փափաքմամբ ետու բերել զսա ի Հռոմկլայէն զի չկայր յերկիրս. եւ ես ձեռամբ իմով գրեցի ի յոյժ վշտաբեր աւուրս: Եւ որք յիշէք զմեզ ի բարի՝ եւ զձեզ յիշեսցէ անմոռացն Աստուած ի բարի: Երախտաւորքն մեր՝ մասն բարի գտցեն ի Քրիստոսէ Աստուծոյ եւ մեղուցելոցն մեր, եթէ բանիւ եւ եթէ գործով՝ թողութիւն համայնիցն շնորհեսցէ Քրիստոս: Եւ նմա փառք յաւիտեանս ամէն: [թղ 20 ա]

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ